ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱԶՄԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Վ. Ա.

Հայաստանի՝ ժողովրդավարական սկզբունքներով զարգացման ընտրությունը իրավականորեն կայացած փաստ է: Սակայն փաստական ժողովրդավարության հաստատումը առնչվում է բազմաթիվ խնդիրների լուծմանը, որոնցից են եվրոպական մոդելի՝ համապատասխան ժողովրդավարական ինստիտուտների ձևավորումը և հաստատումը՝ համալրված եվրոինտեգրման հետ կապված որոշ պարտավորություններով: Համաձայն այդ պարտավորությունների, Հայաստանում կարևորվում է ընտրությունների՝ որպես ժողովրդավարական քաղաքական համակարգի ձևավորման միջոցի և սկզբունքի կայացումը: Ակնհայտ է, որ այժմ Հայաստանին չի հաջողվում եվրոպական չափանիշներին լրիվ համապատասխանող ընտրություններ անցկացնել: Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) Կարծիքում որպես պատճառ նշվում են «պետության առանցքային ինստիտուտների անկարողությունը իրենց գործառույթները կատարելիս լիովին պահպանելու ժողովրդավարական չափանիշները և …մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքները»[1]: Ժողովրդավարական ընտրությունների կայացումը ուղակիորեն կապվում է նաև բազմակուսակցականության ձևավորման հետ:

Միևնույն ժամանակ, Ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) Կարծիքում ասված է, որ միայն լավ Սահմանադրությունը բավարար պայման չէ ժողովրդավարություն տանող ճանապարհին. դրա համար պետք է կառուցվի այնպիսի քաղաքական և սոցիալական համատեքստ, որը հնարավորություն կընձեռի կառավարման նորաստեղծ համակարգի արդյունավետ իրականացման համար[2]:

Անցումային շրջանում Հայաստանում կատարված տարբեր մակարդակի ընտրություններում արտացոլվում են տվյալ ժամանակում երկրի քաղաքական համակարգի կառուցվածքային և գործառութային առանձնահատկությունները: Ընտրությունից ընտրություն քաղաքական համակարգում տեղի ունեցած դրական կամ բացասական շարժընթացն ակնհայտորեն արտահայտվում է ընտրությունների արդյունքներում: Այսպես, առաջին գումարման Ազգային ժողովի ընտրություններին (1995 թ.) մասնակցեց 13 քաղաքական միավոր, որոնցից, ընտրությունների արդյունքներով օրենքով սահ-

---

[1] *ԵԽԽՎ Բանաձև, թիվ 1609 (2008):*

[2] *Վենետիկի հանձնաժողով, Վերջնական կարծիքի նախագիծ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ, Կարծիք 313 (2004), Ստրասբուրգ, 16.IX.2005, էջ 10 (www.coe.am/docs/venice/opinion_313_2004.pdf):*

մանված 5%-ի սահմանագիծը հաղթահարեցին հինգը՝ Հանրապետություն միավորում (42.66%), Շամիրամ (16.88%), ՀԿԿ (12.10%), ԱԺՄ (7.51%) և ԱԻՄ (5.57%)[3]: Ընտրություններից առաջ քվեարկության կարգի, քվեաթերթիկի ձևի կամ ընտրական գործընթացի այլ կողմերի ուղղությամբ ընտրողներին քիչ տեղեկատվություն էր տրամադրվել: Այդ մասին է վկայում նաև ընտրությունների արդյունքներով անվավեր ճանաչված ձայների քանակը՝ 411743 կամ ընտրություններին մասնակցած ընտրողների 34.7%-ը[4]: Եթե այս թվին գումարենք նաև ԱԺ չանցած ուժերի հավաքած ձայները՝ 96338 կամ 8.13%, ապա կստացվի, որ ընտրություններում ձայների 42.83%-ը անարդյունավետ է եղել: Սրա գլխավոր պատճառն այն էր, որ ոչ միայն ընտրողները, այլ նաև քաղաքական ուժերը դեռևս չէին հարմարվել նոր քաղաքական համակարգին: Քաղաքացիների մեջ շփոթություն առաջացրեց նաև հենց ընտրության ձևը, երբ պետք էր ընտրությունը կատարելու համար 13 մասնակիցներից 12-ի անունները ջնջել:

Նույն թվականին տեղի ունեցավ նաև հանրաքվե, որի շնորհիվ ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը: Հանրաքվեին մասնակցել էր 1217531 մարդ, այսինքն՝ ավելի շատ, քան խորհրդարանական ընտրություններին, բացի դրանից, հանրաքվեի արդյունքներով, անվավեր ձայների թիվը 39440 էր: Այս փաստերը խոսում են քաղաքացիների՝ սահմանադրական հանրաքվեով ավելի շատ հետաքրքրված լինելու մասին: Բացի դրանից, եթե հանրաքվեի ժամանակ քաղաքացիները պետք է ընտրություն կատարեին միայն «Այո» և «Ոչ» պատասխանների, ապա խորհրդարանական ընտրություններում՝ արդեն 13 մասնակիցների միջև: Սահմանադրության ընդունումը ստեղծեց բոլոր նախադրյալներն ու իրավական երաշխիքները պետական իշխանության մարմինների լիազորությունների և գործառույթների իրականացման համար, ինչը կարևոր քայլ էր քաղաքական ինստիտուտների ձևավորման հիմքերն ամրապնդելու ճանապարհին: Սահմանադրությամբ հիմնավորվեց Հայաստանում քաղաքական կուսակցությունների գործունեության կարգը. «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում է բազմակուսակցականությունը: Կուսակցությունները կազմավորվում են ազատորեն, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Նրանց գործունեությունը չի կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին, իսկ կառուցվածքն ու գործելակերպը՝ ժողովրդավարության սկզբունքներին»[5]:

1999 թ. մայիսի 30-ին կայացած ՀՀ երկրորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունների շնորհիվ ընտրվեց 131 պատգամավոր՝

---

[3] *Վերլուծական տեղեկանք 1995 թ. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հանրաքվեի արդյունքների ամփոփման մասին (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1188, ց. 3, գ. 38, մաս II, էջ 47):*

[4] *Նույն տեղում, էջ 72:*

[5] *Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Ե., 1995, հոդվ. 7 (չրփոփոխված):*

75 մեծամասնական և 56 համամասնական ընտրակարգով: Նախորդ ընտրությունների հետ համեմատած՝ համամասնական ընտրակարգով տեղերի թիվն ավելացել էր, ինչն, իհարկե, վկայում է ինչպես խորհրդարանի, այնպես էլ կուսակցությունների քաղաքական զարգացման և դիրքերի ամրապնդման մասին: Բազմակուսակցական քաղաքական դաշտի ձևավորման սկզբնավորման մասին է փաստում նաև ընտրություններին մասնակցած կուսակցությունների քանակը (21 կուսակցություն և դաշինք): Նման քանակը, իհարկե, մի կողմից, խոսում է բազմակուսակցական համակարգի սաղմնավորման, մյուս կողմից՝ քաղաքական համակարգի անկայունության և կուսակցություն ինստիտուտի չկայացածության մասին: Համաձայն ընտրությունների արդյունքների՝ օրենքով սահմանված 5%-ի սահմանագիծը հաղթահարել էին վեց կուսակցություն և դաշինք՝ Միասնություն դաշինք (41.69%), ՀԿԿ (12.05%), Իրավունք և միաբանություն դաշինք (7.96%), ՀՅԴ (7.86%), Օրինաց երկիր (5.28%), ԱԺՄ (5.17%)[6]: Կուսակցություն ինստիտուտի չկայացած լինելու մասին խոսում է նաև որոշ կուսակցությունների հավաքած քվեների քանակը, ինչը ցույց է տալիս, որ կուսակցությունների գործունեությունը դեռևս թափանցիկ չէր, բնակչությունը մինչ ընտրությունները տեղյակ չէր դրանցից շատերի գոյությանը: Հայաստանի կոմունիստական կուսակցության քվեների քանակը՝ 130161, վկայում է, որ այս ժամանակաշրջանում ազգաբնակչության մի ստվար զանգված իր խնդիրների լուծումը դեռ վստահում էր Կոմունիստական կուսակցությանը, այսինքն՝ այս կուսակցությունը ոչ միայն մնում էր լեգիտիմ, այլ նաև համարվում էր արդյունավետ:

Հայաստանի Հանրապետության երրորդ գումարման Ազգային ժողովի 2003 թ. ընրությունները, որին մասնակցում էին 21 կուսակցություն և դաշինք, տեղի ունեցան համաձայն 2002 թ. հուլիսի 3-ին ընդունված «Ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի: Ընտրությունների արդյունքներով, ԱԺ մտան 6 կուսակցություն և դաշինք՝ ՀԿ (23.66%), Արդարություն դաշինք (13.71%), Օրինաց երկիր (12.60%), ՀՅԴ (11.45%), Ազգային միաբանություն (8.91%), Միավորված աշխատանքային կուսակցություն (5.67%): Այդ օրենքով կարգավորվեց համամասնական և մեծամասնական ընտրակարգերի հարաբերակցությունը, առաջնայնությունը տալով համամասնական ընտրակարգին (համամասնական՝ 75 պատգամավոր, մեծամասնական՝ 56)[7]: Ինչպես տեսնում ենք, օրենսդրական քայլեր են կատարվում բազմակուսակցական համակարգի ուժեղացման և համամասնական ժողովրդավարության անցման ուղղությամբ, որի շնորհիվ քաղաքական կուսակցություն ինստիտուտի փոխակերպման գործընթացում

---

[6] *http://parliament.am/parliament.php?id=parliament*

[7] *Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ընդունվել է 03.07.2002 թ.), հոդվ. 55, կետ 1 և 2 (http://parliament.am//legislation.php?sel=showLID=1511L lang=arm):*

սկսվեցին դրական շարժընթաց և դիրքերի բարելավում՝ շարունակվելով նաև հաջորդ տարիներին:

2005 թ. մայիսին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով փոփոխվեց Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածը, և համամասնական ընտրակարգով ընտրվող պատգամավորների տեղերը դարձան 90[8]: Բարեփոխված օրենսգրքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) համատեղ եզրակացության մեջ նշվում է. «Բարեխիղճ իրագործման դեպքում Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրքը կարող է լուրջ հիմքեր ապահովել ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար: Հայաստանի Հանրապետությունում իսկապես ժողովրդավարական ընտրությունների ճանապարհին մնացող հիմնական մարտահրավերներն են բարեխիղճ իրագործումը և գործընթացի բոլոր մասնակիցների կողմից քաղաքական կամքի դրսևորումը»[9]: Եզրակացությունում նաև նշվում է. «Չնայած այն հանգամանքին, որ պրակտիկան ավելի շատ բարելավման կարիք ունի, քան օրենսդրությունը, հարկ է դիտարկել Օրենսգրքում փոփոխություններ կատարելու նպատակահարմարությունը, որոնցով կարելի կլինի ապահովել միջազգային չափանիշներ, ԵԱՀԿ-ի նկատմամբ ստանձնած հանձնառությունների և Եվրոպայի խորհրդի չափանիշների կատարումը»[10]: Ըստ եզրակացության, ուշադրության արժանի խնդիրներ են՝ 1. բողոքարկման և գանգատարկման ընթացակարգերը, որոնց առնչվող նորմերը պետք է ավելի համակարգված դարձնել, իսկ ընթացակարգը՝ ավելի արդյունավետ: 2. Հավասարակշռության ապահովման խնդիրը ընտրական հանձնաժողովների կազմերում: 3. Ընտրական գրավի չափի խնդիրը: 4. Ընտրողների անձը հաստատող փաստաթղթերի դրոշմակնքման խնդիրը[11]: Վերջինը գնահատվում է որպես կրկնակի քվեարկությունը բացառող լավ երաշխիք, բայց ընտրակեղծիքի նման տեսակը բացառելու համար առաջարկվում է օգտագործել ավելի պատշաճ միջոց (օրինակ, մատների թանաքոտում): Վերոհիշյալ փաստաթղթերի առկայությունը թույլ է տալիս փաստել, որ Հայաստանում օրենքով ապահովված են թե՛ կուսակցությունների և թե՛ ընտրությունների ինստիտուտների՝ եվրոպական չափանիշներին համապատասխան նորմատիվ հիմքերը:

---

[8] *Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ընդունվել է 19.05.2005 թ.), հոդվ. 57, կետ 1 և 2 (http://parliament.am//legislation.php?sel=showLID=2306L lang=arm):*

[9] *Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի համատեղ եզրակացություն Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 2007 թ. դեկտեմբերի դրությամբ փոփոխված և լրացված տարբերակի վերաբերյալ, Վենետիկ, 2008, կետ 80, էջ 22:*

[10] *Նույն տեղում, կետ 79, էջ 22:*

[11] *Նույն տեղում:*

2005 թ. նոյեմբերի 27-ի ժողովրդական հանրաքվեով փոփոխություններ մտցվեցին Սահմանադրությունում: Դրա շնորհիվ սահմանափակվեցին նախագահի լիազորությունները, մեծացավ ԱԺ դերը Կառավարության կազմավորման հարցում, ինչը վկայում է ժողովրդավարական համակարգի կայունացմանն ուղղված քայլերի, քաղաքական կուսակցությունների գործունեության բարեփոխման և կուսակցության ինստիտուցիոնալացման գործընթացի մասին: Կարծիք կա, որ բարեփոխված Սահմանադրությունը հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության խորացման, իշխանությունների հավասարակշռության, դատական համակարգի անկախության, Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի սահմանադրական երաշխիքների և տեղական ինքնակառավարման մարմինների անկախության ապահովման[12]:

2007 թ. մայիսի 25-ին ՀՀ չորրորդ գումարման Ազգային ժողովի՝ արդեն նոր Ընտրական օրենքով տեղի ունեցած ընտրություններին մասնակցեց 23 կուսակցություն, որոնցից միայն հինգը հաղթահարեցին օրենքով սահմանված սահմանագիծը (ՀՀԿ՝ 33.91%, ԲՀԿ՝ 15.13%, ՀՅԴ՝ 13.16%, Օրինաց երկիր՝ 7.05%, Ժառանգություն կուսակցություն՝ 6.0%)[13]:

Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած՝ ԱԺ չորս ընտրությունների արդյունքների ամփոփումը արձանագրում է երկրում բազմակուսակցականության և «ընտություններ» ինստիտուտի հաստատման ինչպես դրական, այնպես էլ բացասական շարժընթաց: Դրական է ընտրությունների մասնակցողների թվի աճը, ինչը խոսում է երկրում ընտրությունների հանդեպ վստահության մեծացման, ինչպես նաև կուսակցությունների գործունեության լեգիտիմացման գործընթացի սկզբի մասին: Դրական շարժընթաց է նաև անվավեր ձայների թվի կրճատումը, որը վկայում է երկրում ընտրական մշակույթի զարգացման և քաղաքական դաշտի աստիճանական ձևավորման մասին:

Հայաստանում կուսակցությունների ազատ գործունեության թույլատրումը, բազմակուսակցականության սահմանադրական և օրենսդրական հիմքերի ստեղծումը և ուժեղացումը հանգեցրին երկրում բազմաթիվ կուսակցությունների առաջացման: Բայց կուսակցությունների առատությունը դեռևս չի խոսում բազմակուսակցական համակարգի և կուսակցության՝ որպես կարևորագույն քաղաքական ինստիտուտի կայացման մասին: Այդ է վկայում այն փաստը, որ ԱԺ չորս գումարումների կուսակցական կազմը ընտրությունից ընտրություն կտրուկ փոփոխվում է: Այսպես, 1995 թ. բավական մեծ վարկանիշով առաջին գումարման խորհրդարան անցած 5 կուսակցություններից երկրորդում տեղ գտան միայն երկուսը, իսկ երրորդ և չորրորդ նստաշրջաններում դրանցից ոչ մեկն արդեն ներկայացված չէր: Երկրորդ նստաշրջանում ԱԺ մտան 4 նոր քաղա-

---

[12] **Հակոբյան Հ.,** *Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Ե., 2007, էջ 166:*

[13] *http://www.elections.am/Partis.aspx*

քական ուժեր, որոնցից միայն երկուսը տեղ գտան նաև երրորդ և չորրորդ գումարման Ազգային ժողովներում: Երրորդ գումարումից միայն երեքը պահպանեցին իրենց տեղերը չորրորդ գումարման Ազգային ժողովում: Երբ 12, 13, 16, 41-42% քվեներ ստացած քաղաքական ուժը հաջորդ ընտրությանն անհետանում է քաղաքական դաշտից՝ չհաղթահարելով նույնիսկ 5% սահմանագիծը, նշանակում է՝ տվյալ կուսակցությունը և դաշինքը փաստականորեն ինստիտուցիոնալացված և լեգիտիմ չեն, այլ դաշտում հայտնվել են պատահական գործոնների ազդեցության հետևանքով: Դա վկայում է նաև քաղաքական ողջ համակարգի չկայացածության և հասարակության քաղաքական ցածր մշակույթի մասին:

Կուսակցության՝ որպես քաղաքական ինստիտուտի կարևորագույն գործառույթներից է շահերի խտացումը (ագրեգացիան): Դա մի գործունեություն է, որի ընթացքում տեղի է ունենում անհատների և խմբերի քաղաքական պահանջների միավորում կուսակցական ծրագրերի մեջ[14]: Հայաստանում գոյություն ունեն բազմաբնույթ սոցիալական, տնտեսական և, իհարկե, քաղաքական շահեր հետապնդող խմբեր ու զանգվածներ, որոնք այդ շահերի արտահայտումը փորձում են գտնել կուսակցությունների ծրագրերում: Հայաստանի ընտրական համակարգում ամրագրված գործընթացների իրագործման ձևերն ու մեթոդները այդ խմբերի ուշադրությունն ուղղում են դեպի քաղաքական կուսակցությունների՝ որպես կարևորագույն քաղաքական ինստիտուտների բոլոր քաղաքական գործընթացների նախաձեռնողների և անմիջական մասնակիցների գործունեությանը: Սակայն կուսակցական գործիչների և կուսակցությունների գործունեությունը, որպես կանոն, մեծ մասամբ չի համապատասխանում այն ինստիտուցիոնալ չափանիշներին, որոնցով հասարակությունը կառուցում է իր սպասումներն ու պատկերացումները դրանց մասին: Կուսակցական դաշտի բազմազանությունը և այդ կուսակցություններից շատերի ծրագրային դրույթների նմանություններն առաջացնում են խառնաշփոթ, ինչը բացասաբար է ազդում թե՛ բնակչության մի ստվար զանգվածի շահերի չարտահայտված լինելու և թե՛ բազմաթիվ կուսակցությունների գործունեության արդյունավետության վրա: Այս մասին են վկայում երկրում տեղի ունեցած ԱԺ ընտրությունների արդյունքները: 1999 թ. ընտրություններին մասնակցել է ընտրելու իրավունք ունեցողների 51.74%: Եվ չնայած ընտրություններին մասնակցած կուսակցությունների և դաշինքների (21 կուսակցություն և դաշինք) առատությանն ու բազմազանությանը՝ ընտրողների 2%-ից ավելին (23314 ձայն) քվեարկել է «բոլորին դեմ»: Նշանակում է՝ ընտրողների մի ստվար զանգված կուսակցություններից ոչ մեկին չի համարում իր շահերն արտահայտող ու կրող, նրանց չի վստահում, չի պաշտպանում, չի կողմնորոշվում և պատրաստ չէ գնալ նրանց հետևից: Այս իրավիճակը թույլ է տալիս եզրակացնել, որ «ընտրությունների»

[14] **Алмонд Г., Пауэлл Дж., Стром К., Далтон Р.** *Сравнительная политология сегодня, М., 2002, с.156.*

ինստիտուտը Հայաստանում դեռևս կայացած չէր, և դեռ չէր ձևավորվել ընտրական մշակույթ. դա են փաստում անվավեր ճանաչված 65568 (5.76%) ձայները: Նույնպես «կորած» կարելի է համարել այն 197243 քվեն (17.33%), որը ստացել էին ԱԺ չանցած 15 կուսակցությունները միասին: Հենվելով այս տվյալների վրա՝ կարելի է արձանագրել, որ ընտրազանգվածի 25%-ը կամ յուրաքանչյուր 4-րդ քվեն արդյունավետ չի եղել: Այսինքն, յուրաքանչյուր չորրորդ քաղաքացին չի կողմնորաշվում երկրում ստեղծված սոցիալ-քաղաքական իրողություններում, չի վստահում որևէ քաղաքական ուժի և օտարված է քաղաքականությունից: Դրա գլխավոր պատճառներից է կուսակցությունների չկայացած լինելը: Հանրապետությունում գործող և ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի առատությունը բոլորովին էլ չի նշանակում գաղափարական լայն սպեկտր: Իրականում, կարելի է ասել, որ ընտրողը չի ունեցել ընտրության օբյեկտիվ չափանիշներ, խճճվել է ընտրացուցակում ներ-կայացված ուժերի նմանություններում ու տարբերություններում, որի հետևանքով նվազել են ընտրողների ձայների արդյունավետության աստիճանը և Ազգային ժողովի ներկայացուցչականությունը:

2003 թ. ԱԺ ընտրությունների արդյունքներով, արձանագրվում է ընտրություններին մասնակցողների թվի թեթևակի աճ՝ 1233757, ինչը կազմում էր ընտրելու իրավունք ունեցողների 52.70%-ը, ինչպես նաև արդյունավետ քվեների աճ՝ 900803, համապատասխանաբար նվազեց նաև անվավեր ձայների թիվը: Այս փաստերն այն դրական շարժընթացն են, որը տեղի է ունեցել նախորդ ընտրությունների համեմատությամբ: Անհրաժեշտ է նաև նշել, որ այս երկու ընտրությունների արդյունքներով, ԱԺ-ում ներկայացված են եղել միևնույն հինգ կուսակցությունները (ՀՀԿ, Օրինաց երկիր, ՀԺԿ, ՀՅԴ, Ազգային միաբանություն). նշանակում է՝ երկրում արդեն գործում էին կուսակցություններ, որոնք ունեին որոշակի կայուն ընտրազանգված: Այսինքն՝ բնակչության այդ զանգվածն իր շահերի արտահայտումը գտել էր այս կուսակցությունների ծրագրերի մեջ, վստահում և պաշտպանում էր նրանց քաղաքական ընթացքը: Սկսվել էր այս կուսակցությունների լեգիտիմացման գործընթացը: Բայց սրա հետ մեկտեղ այս ընտրությունների հետևանքով աճել էր նաև անարդյունավետ ձայների թիվը՝ 283923 (23%): Հաշվի առնելով նաև 34622 (2.8%) անվավեր ճանաչված քվեները՝ կարելի է արձանագրել, որ այս ընտրություններում ձայների մոտավորապես 26%-ը անարդյունավետ է եղել:

ՀՀ ԱԺ չորրորդ ընտրությունների արդյունքները նույնպես գրանցեցին որոշակի դրական շարժընթացներ: Այս ընտրություններում նույնպես նկատվում է մասնակիցների թվի աճ՝ 1391540 (59.98%), նաև անվավեր քվեների քանակի կայունացում՝ 38002 (2.7%): Բայց միևնույն ժամանակ, դարձյալ հարկ է արձանագրել անարդյունավետ քվեների աճ՝ 334403 (24%), բացի դրանից, նաև ընտրություններին մասնակցող կուսակցությունների և դաշինքների թվի աճ. 23՝ նախորդ 21-ի փոխարեն, որը նույնպես անարդյունավետ ձայների թվի աճի պատճառ է: Այդ ամենի հետևանքով,ԱԺ

անցավ հինգ քաղաքական ուժ, նախորդ ընտրությունների վեցի փոխարեն և այս հինգից երկուսը՝ նորաստեղծ Բարգավաճ Հայաստան և Ժառանգություն կուսակցությունները, առաջին անգամ:

Դիտարկելով ԱԺ չորս գումարումների քաղաքական կազմերը՝ կարելի է արձանագրել, որ ԱԺ ներկայացուցչականությունը նվազել է: 1995 թ. ձևավորված ԱԺ-ում կար 6 քաղաքական միավոր, որոնցում ներկայացված էին 10 կուսակցություն, երկրորդ գումարման ԱԺ-ում՝ վեց քաղաքական ուժ և 8 կուսակցություն, 2003 թ. ընտրություններով՝ 6 և 14: 2007-ից գործող ԱԺ մտել են 5 կուսակցություն: Միևնույն ժամանակ, համապատասխանաբար չորս ընտրությունների արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ, բացի անարդյունավետ ձայների թվի աճից, տեղի է ունեցել նաև արդյունավետ ձայների թվի աճ: Եթե երկրորդ գումարման ԱԺ անցած 6 քաղաքական ուժերը միասին ստացել էին ընտրությունների մասնակիցների 860689 քվեները, ապա 2003 թ.՝ 900803, իսկ 2007 թ. արդեն հինգ կուսակցությունների օգտին քվեարկել էր 1017020 ընտրող:

Աժ չորս գումարումների կազմերի վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնել երեք կուսակցություն՝ ՀՀԿ, Օրինաց երկիր կուսակցություն և Հայ Յեղափոխական Դաշնակցություն, որոնք ներկայացված են եղել վերջին երեք խորհրդարանում (իսկ ՀՀԿ-ն՝ նաև առաջին ԱԺ-ում) և կարող են դառնալ Հայաստանում կայուն բազմակուսակցական համակարգի ձևավորման հիմք: Հայաստանի ժողովրդական կուսակցությունը և Ազգային միաբանությունը ևս ներկայացված են եղել երկրորդ և երրորդ գումարման խորհրդարաններում, բայց չորրորդ ԱԺ չանցան, ինչը խոսում է նրանց նկատմամբ վստահության նվազման մասին: Հատուկ կարևորություն ունի ընդդիմադիր կուսակցությունների ներկայացվածությունը խորհրդարանում: Առաջին գումարման Ազգային ժողովում ընդդիմությունը ներկայացված էր երեք կուսակցությունով՝ ՀԿԿ, ԱԺՄ և ԱԻՄ, երկրորդում ՀԿԿ-ն և ԱԺՄ-ն մեկական տեղ ավել ունեին, ԱԻՄ-ը ներկայացված չէր, խորհրդարան անցավ Օրինաց երկիր կուսակցությունը, որը լոյալ ընդդիմություն էր: Երրորդ ԱԺ-ում ՀԿԿ-ն և ԱԺՄ-ն արդեն ներկայացված չէին, Օրինաց երկիրը դարձավ խորհրդարանական կոալիցիոն մեծամասնության անդամ: Իսկ ընդդիմադիր Արդարություն դաշինքը ոչ թե քաղաքական-գաղափարական խնդիրներ էր առաջ քաշում, այլ շարունակում էր վեճը նախագահի ընտրության շուրջ: Բացի Արդարությունից՝ ԱԺ-ում ներկայացված էր նաև ընդդիմադիր Ազգային միաբանությունը, բայց քանի որ այս ուժերի գործունեությունները միասնական բնույթ չէին կրում, նրանք չկարողացան որևէ փոփոխություն մտցնել քաղաքական դաշտում: Նրանք միավորված էին ընդդեմ իշխանությունների, ըստ որում, չկարողացան գոնե համաձայնության գալ, որովհետև զուտ անձնական կամ նեղ խմբային շահեր էին հետապնդում: Չորրորդ գումարման ԱԺ-ում տեսնում ենք միայն մեկ լիարժեք ընդդիմադիր ուժ՝ նորաստեղծ Ժառանգություն կուսակցությունը:

ԱԺ ընտրությունների արդյունքների վերլուծությունը և ընտրությունից ընտրություն խորհրդարանում ընդդիմադիր ուժերի փոփոխումը խոսում է այս կուսակցությունների ոչ լիարժեք ինստիտուցիոնալացման մասին: Այս ուժերը կարողանում են մեկ կամ երկու ընտրություններում հաջողության հասնել, բայց հետո կորցնում են իրենց ընտրազանգվածը: Խորհրդարանում և խորհրդարանից դուրս նրանց կեցվածքը և գործունեությունը հիմնված են ոչ թե ծրագրային դրույթների կամ ընտրազանգվածի շահերի, այլ միայն իշխանության քայլերի քննադատության վրա: Հենց այդ պատճառով էլ շատ արագ կորցնում են ընտրողների վստահությունը:

Հասարակությունում անընդհատ աճում է իր շահերն արտահայտելու և պաշտպանելու ընդունակ քաղաքական ուժերի պահանջը: ՀՀ-ում այս տեսանկյունից, պաշտոնական մակարդակում, ամեն ինչ բնականոն վիճակում է: Հանրապետությունում օրենքի պահանջներին համապատասխան գրանցված 70-ից ավելի քաղաքական կուսակցությունների մի մասը մասնակցում է ընտրություններին: Կուսակցությունները, համաձայն օրենքի պահանջի, ներկայացված են հանրապետության ամբողջ տարածքում և ունեն նվազագույնը 2000 անդամ: «Պետական գրանցման պահից ոչ ուշ, քան վեց ամիս հետո կուսակցությունը պետք է ունենա ոչ պակաս, քան 2000 անդամ, ընդ որում, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում՝ ոչ պակաս, քան 100 անդամ, և տարածքային ստորաբաժանումներ՝ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում, ներառյալ՝ Երևան քաղաքում, որի մասին գրավոր տեղեկացնում է պետական լիազորված մարմնին»[15]: Իրականում, կուսակցությունների նման առատությունը խոսում է ոչ թէ քաղաքացիական հասարակության կայացման և ներկայացուցչական ժողովրդավարության զարգացման, այլ քաղաքական դաշտի անորոշության, քաղաքական համակարգի անհամակարգվածության և անկայունության մասին: Հատկապես ընդդիմադիր դաշտում գործող կուսակցությունների նման առատությունը և նրանց անհանդուրժողական կեցվածքը ոչ միայն իշխանության, այլ նաև մեկը մյուսի նկատմամբ անբարենպաստ ազդեցություն ունեն ամբողջ քաղաքական համակարգի վրա: Այս ուժերը, նվազագույն տարաձայնություններ ունենալով գաղափարական դրույթներում, բաժանում են ընտրազանգվածը և ընտրությունների ժամանակ չեն հասնում հաջողության՝ այդ քվեները դարձնելով անարդյունավետ: Այսօր ՀՀ-ում գործող կուսակցությունների մի մասը ներկայացնում է զուտ ընտրական մեքենա՝ կուսակցական առաջնորդների՝ իշխանության հասնելու և նեղ խմբային շահեր լուծելու համար: Կուսակցության գործունեության նման առաջնայնությունների պայմաններում կուսակցական գաղափարախոսությունը կամ լիովին բացակայում է, կամ մղված է երկրորդ պլան: Գաղափարախոսությունը նախընտրական մեխանիզմներում զուտ օժանդակ դեր է խաղում, իսկ առաջին պլան են մղվում քա

---

[15] *Հայաստանի Հանրապետության կուսակցությունների մասին օրենք, գլուխ I, հոդվ. 5, կետ 1.1՝ ընդունված 03.07.2002 (www.arlis.am):*

ղաքական մարկետինգը, գովազդը, PR-ը, որոնց միակ նպատակն է ընտրողների մեջ որևէ միջոցով ստեղծել թեկնածուի, կուսակցության դրական կերպար: Այս պայմաններում քաղաքացիները դիտվում են զուտ որպես ընտրողներ, որոնց պետք է գրավել և ստանալ նրանց ձայնը: Ինչպես տեսնում ենք, հասարակական խմբերի շահերի ներկայացման և պաշտպանության մասին գործառույթն անտեսված է: Կա միայն նեղ կուսակցական շահը. այն է՝ կուսակցական առաջնորդների՝ քաղաքականության մասնակից դառնալը: Իհարկե, «կուսակցություն» և «ընտրություն» հասկացությունները ժողովրդավարական համակարգի փոխկապակցված ինստիտուտներ են: Ընտրությունները համարվում են առաջին և ամենազլխավոր միջոցը քաղաքական համակարգի լեգիտիմացման գործընթացում: Բայց եթե արևմտյան երկրներում կուսակցությունները պայքարում են իրենց գաղափարախոսությամբ և ծրագրերով, ապա Հայաստանում՝ գովազդով, ընտրակաշառքով և ազդեցության տարբեր լծակների օգտագործմամբ, ինչը վկայում է դրանց չկայացածության մասին:

Սա հատուկ է ոչ միայն Հայաստանին, այլ հետխորհրդային երկրներին, որտեղ գործ ունենք ոչ թե բազմակուսակցական համակարգի, այլ կուսակցությունների համախմբի հետ, ինչը սկզբունքորեն տարբերվում է առաջինից: Նախ, չլինելով համակարգի մաս՝ կուսակցությունները պատասխանատվություն չեն կրում ոչ միայն այդ համակարգի մյուս տարրերի, այլև ընդհանրապես հասարակության առաջ՝ տուրք տալով անպատասխանատու հռետորությանն ու ամբոխավարությանը[16]: Այս տիպի կուսակցությունները, հայտնվելով քաղաքական դաշտում, բայց չկարողանալով ներդաշնակ գործել որպես համակարգի գործուն տարր, խանգարում են դրա կայացմանն ու գործունեությանը:

Այսօրվա դրությամբ կարող ենք փաստել, որ Հայաստանում ապահովված են թե՛ կուսակցությունների և թե՛ ընտրությունների ինստիտուտների գործունեության օրենսդրական անհրաժեշտ բոլոր հիմքերը, որոնք գրեթե լիարժեք համապատասխանում են եվրոպական չափօրինակներին: Բացի դրանից, օրենքը խթանում է կուսակցությունների գործունեությունը՝ նրանց տալով բացառիկ իրավունքներ, նաև օրենսդրությամբ ամրագրելով կուսակցության գործուն ու առաջնային դերը[17]: Բայց անհրաժեշտ օրենսդրական դաշտի ձևավորման և կուսակցությունների գործունեության խթանումը այս ինստիտուտների կայացման ճանապարհին կատարվելիք քայլերից ընդամենը առաջինն է. սույն գործընթացը շարունակական է, և դեռևս վաղ է խոսել տվյալ ինստիտուտի՝ ժողովրդավարական չափօրինակներին համապատասխան լինելու մասին:

Ինչ վերաբերում է ընտրությունների ինստիտուտին, այն նույնպես դեռևս փոխակերպման գործընթացում է: Հաշվի առնելով քա-

---

[16] **Թորոսյան Տ.,** *Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Ե., 2006, էջ 144:*

[17] *Հայաստանի Հանրապետության կուսակցությունների մասին օրենք, գլ. I, հոդվ. 8, կետ 1, գլ. II, հոդվ. 11, կետ 1, գլ. IV, հոդվ. 21:*

ղաքացիների հետաքրքրվածությունն ընտրություններով (դրա մասին է վկայում նաև երկրում անցկացված ընտրություններին մասնակցածների թվի աճը), էլ ավելի են կարևորվում բազմակուսակցականության կայացումը և կայունացումը: Ակնհայտ է, որ կայացած քաղաքական համակարգում չեն կարող գոյություն ունենալ այդքան մեծ թվով կուսակցություններ և դաշինքներ: Գ. Պողոսյանն իր խիստ արդիական ուսումնասիրության մեջ կանխատեսում է գործող շատ կուսակցությունների միավորում երեք հիմնական դաշինքներում կամ համակենտրոնացում երեք հիմնական կուսակցական գաղափարախոսությունների շուրջ: Առաջինը ազգային սոցիալիստական գաղափարն է, երկրորդը՝ լիբերալ դեմոկրատական դոկտրինը և երրորդը՝ սոցիալ-դեմոկրատիայի գաղափարախոսությունը[18]: Նման միավորման դեպքում տեղի կունենա կուսակցությունների խոշորացում, այսինքն՝ ներքին պոտենցիալի ավելացում, բացի դրանից՝ բզկտված ընտրազանգվածի համախմբում: Միավորումը, անշուշտ, բարենպաստ ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործընթացի և ներկայացուցչականության զարգացման վրա՝ բարեփոխելով ոչ միայն բազմակուսակցական համակարգը, այլ նաև ընտրական համակարգը՝ այն դարձնելով առավել արդյունավետ: Քաղաքական ուժերի համախմբումը քաղաքական դաշտից դուրս կմղի «գրպանիկային» կուսակցություններին, քաղաքական կուսակցությունների և ուժերի հանդեպ կուժեղացնի հասարակական հետաքրքրվածությունը ոչ միայն նախընտրական փուլերում այլ նաև դրանց միջև ընկած ժամանակահատվածներում: Տեղի կունենա քաղաքական ուժերի բյուրեղացում, քաղաքական դաշտի հստակեցում: Բայց, ցավոք, նման գործընթաց դեռևս չի նկատվում:

Բազմակուսակցականության կայացման համար կարևոր նշանակություն կունենան 2011 թ. խորհրդարանական ընտրությունները: Դրանք կլինեն էլ ավելի արդյունավետ, եթե մինչ այդ գոնե սկսված լինի կուսակցությունների գաղափարական միավորումը: Փաստորեն, այսօրվա դրությամբ, բազմակուսակցականության կայացման համար անհրաժեշտ է Հայաստանում գործող և ընտրություններին մասնակցող կուսակցությունների թվի նվազում՝ ի հաշիվ գաղափարակիցների, ինչպես նաև նույն կամ մոտ շահեր ու նպատակներ ունեցող կուսակցությունների միավորման: Մյուս կարևոր պայմանը երկրում տիրող սոցիալ-տնտեսական պայմանների բարեփոխումն է: Ընտրողների սոցիալ-տնտեսական դրության ազդեցությունը մեծ է հատկապես իշխող կուսակցությունների համար: Այդ մասին է վկայում ՀՀՇ-ի փորձը, որը և՛ առաջին Գերագույն խորհրդում, և՛ առաջին ու երկրորդ Ազգային ժողովներում իշխող դեր ուներ, իսկ արդեն երրորդ և չորրորդ ԱԺ-ներում ներկայացված չէր: Գլխավոր պատճառը այդ կուսակցության՝ իշխանությունում եղած տարիներին երկրում սոցիալ-տնտեսական իրավիճակի կտրուկ վատթարացումն էր:

---

[18] **Պողոսյան Գ.,** *Հայ հասարակությունը XXI դարասկզբին, Ե., 2006, էջ 151:*

Իհարկե, դժվար է կանխատեսումներ անել Հայաստանի Հանրապետությունում բազմակուսակցական համակարգի ապագայի վերաբերյալ, քանի որ առկա կուսակցությունները առայժմ անհնար է բաժանել դասական սկզբունքով՝ աջեր, ձախեր, կենտրոնամետներ: Իսկ քաղաքական դաշտում դեռևս գոյություն ունեն կուսակցություններ, որոնց ոչ միայն ծրագրային դրույթները, այլև անգամ անվանումները հայտնի չեն հասարակությանը:

РОЛЬ ВЫБОРОВ В ПРОЦЕССЕ СТАНОВЛЕНИЯ МНОГОПАРТИЙНОСТИ В АРМЕНИИ

МАТЕВОСЯН В. А.

Резюме

Важнейшими показателями формирования многопартийности, институционализации партий, а значит и формируемых ими органов власти является их участие или неучастие в выборах. В свете сказанного был проведен сопоставительный анализ результатов выборов в Национальном собрании в 1995, 1999, 2003 и 2007 гг., позволивший выявить нестабильность участия и представленности партий в парламенте. В результате некоторые политические партии исчезали, и на смену им приходили новые. В силу сказанного для повышения эффективности демократизации необходима реальная многопартийность, которая возможна лишь на фоне качественных изменений в избирательном процессе.